38
Հ-94

ՀԱՅԿՈՄԱՍ—ՀԱՅԲԱՄԲԱԿՏՐԵՍՏ

381.6
ՀՍՍՌ ԳԻՏ. ԳՐԱԴԱՐԱՆ Ա.Ս.Հ.Ս.Հ.
Մասն. № 1278

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ
ԲԱՄԲԱԿԻ ՀՈՒՄՔԻ ՅԵՎ ՍԵՐՄԱՑՈՒԻ ՄԹԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ

38
Հ-94

ԳՅՈՒՂՀՐԱՏ, ՅԵՐԵՎԱՆ, 1935

38
Հ-94
04 AUG 2010

ՀՐԱՀԱՆԳ

ԲԱՄԲԱԿԻ ՀՈՒՄՔԻ 1935 Թ. ԲԵՐՔԻ ՄՔԵՐՈՒՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ԲԱՄԲԱԿԻ ՀՈՒՄՔԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ, ԿՇՌՈՒՄԸ ՅԵՎ ՏԵՍԱԿԱՎՈՐՈՒՄԸ ԳՆՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐՈՒՄ

1. Ինչպես Ցերեանի և Հոկտեմբերյանի բամբակագործ գործարանները, նույնպես և բոլոր գնման կայանները պարտավոր են վոչ ուշ սույն թվի սեպտեմբերի 5-ից վերջացնել գնման կայանների տերիտորիաների ու պահեստների նախապատրաստումը՝ բամբակի հումքն ընդունելու համար, այն է.

ա) տերիտորիաները մաքրել ցեխից ու կեղտից, լցնել փոսերը՝ ապահովելով ծածկերն ու բամբակի համար հատկացրած տարածությունները՝ ջուր, ցեխ և կեղտ թափվելուց.

բ) տերիտորիան բաժանել համապատասխան քանակությամբ մասերի, վորքան խմբերի յեն բաժանված բամբակ հանձնող կոլտնտեսությունները, վորոնց հանձնելիք հումքն ըստ վորակի և թելիկի յերկարության պետք է միասին դաբսվի.

գ) վերջացնել Ցերեանի և Ղամարլուի ծածկերի կառուցումը և մյուսների մասնակի վերանորոգումները.

ՅՍԱ 4 9
17 JUN 2013

դ) պատրաստել հրապարակները՝ հումքը բունտեր դնելու համար։

2. Բամբակազտիչ գործարաններն ու գնման կայանները պարտավոր են.

ա) կազմակերպել բամբակի հումքի անընդմեջ ընդունումը գնման կայաններում այն հաշվով, որ որվա բերած ամբողջ բամբակն ընդունվի նույն որը.

բ) բամբակի տեսակավորումն անցկացնել խիստ մանրազնին և միանգամայն համապատասխան ստանդարտի հետ, թույլ չտալով վոչ մի խախտում.

գ) սխալ կշռումների դեմ պայքարելու նպատակով, գնման կայանների վարիչները պարտավոր են ամեն որ մինչև բամբակի ընդունումն սկսելը, ինչպես նաև կշեռքների աշխատելու ընթացքում, կատարել կշեռքների ստուգում՝ ստուգիչ կշռաքարերով.

դ) ստուգումները կատարում են կոլտնտեսությունների ներկայացուցիչների ներկայությամբ, ստուգման արդյունքները ձևակերպում արձանագրությամբ, իսկ արձանագրությունները մտցվում են ստուգման արձանագրությունների հատուկ գրքի մեջ։ Արձանագրությունները պետք է ստորագրեն ստուգում կատարող անձինք, վորոնց թվում է կոլտնտեսության ներկայացուցիչները, վորոնք մասնակցել են ստուգմանը.

ե) բամբակի հումքի տեսակավորումն ընդունողի կողմից կատարվում է կոլտնտեսության ներկայացուցչի կամ հանձնող մենատնտեսի ներկայությամբ։ Ընդունողի և բամբակ հանձնողի միջև, բամբակի տեսակը և խոնավությունը վորոշելու վերաբերյալ ծագած վեճերը լուծում է գնման կայանի վարիչը՝ կոլտնտեսության և գյուղխորհուրդների ներկայացուցիչների մասնակցությամբ։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Ում СССР
43512-63

Համաձայնության չգալու դեպքում, հումքի նմուշներն ուղարկվում են բամբակազտիչ գործարանների լաբորատորիային։

Լաբորատորիայի վորոշումը պարտադիր է յերկու կողմերի համար.

զ) բամբակն ընդունել ըստ առանձին արդյունաբերական և բուսաբանական տեսակների։ Զրաստակավությունից տուժած, վնասատուների կողմից վնասված (հոտոզից, ջիրայից և չոռից) բամբակի հումքն ընդունել և պահել առանձին։

է) գնման կայանի վարիչները և ընդունողները բամբակի ընդունման և տեսակավորման ընթացքում պարտավոր են ղեկավարվել հետևյալով. բամբակի արդյունաբերական տեսակը վորոշել՝ բարդանի խորքից վոչ պակաս 500 գր նմուշ հանելով և համեմատելով ստանդարտ նմուշների հետ (ետալոնների)։ Հումքին նայելուց և տեսակը վորոշելուց հետո հումքը նորից դրվում է բարդանի մեջ։

Բամբակի ընդունումն առանց յուրաքանչյուր բարդանից նմուշ հանելու արգելվում է, իսկ նրանք, ովքեր բամբակը կընդունեն միայն կշռելով և առանց յուրաքանչյուր բարդանից նմուշ հանելու, կենթարկվեն պատասխանատվության, վորպես արտադրանք փչացնողներ։

Բամբակի հումքը խառնված լինելու դեպքում այդպիսին ընդունվում է այդ խառնուրդի ամենացածր տեսակով։

Ընդունումը կատարել վոչ միայն ըստ արդյունաբերական և բուսաբանական տեսակների, այլև ըստ թելիկի յերկարության, վորի համար և այդ նպատակով բամբակ հանձնողներն ըստ հումքի միատեսակության խմբավորված ամրացվում են բակի

տերիտորիայից նախորոք հատկացված առանձին մասերին, վորտեղ և հանձնողները բերում և դարսում են իրենց հումքը, մինչև նրա հանձնելը։ Այդ դեպքում պետք է ձեռք առնվեն բոլոր միջոցները՝ տարբեր վորակի և յերկարության հումքն իրար չխառնելու համար։ Այն հումքը, վոր բերվում է որվա ընդունելությունը վերջացնելուց հետո և չի կարող նույն որը գնման կայանի կողմից ընդունվել, գնման կայանը պահ է ընդունում, տալով ստացական, վորի մեջ ցույց է տրվում բարդանների քանակը, իսկ այդ հումքի ընդունումը՝ քաշով, և նրա հաշվառքը կատարվում է հետևյալ որը։ Ընդունումն անպատճառ կատարել կոլտնտեսության ներկայացուցչի ներկայությամբ, վորը հատուկ հավատարմագրով լիազորված կլինի բամբակը հանձնելու համար.

ը) սահմանել, վոր միակ փաստաթուղթը՝ կոլտնտեսություններից և մենատնտեսներից հումքի ընդունված փաստացի քանակության մասին՝ համարվում է ընդունման համար սահմանված որդերը, վոր լրացվում է ընդունողի կողմից և տրվում է գրասենյակին՝ բամբակ հանձնողի հետ հաշվառք կատարելու։

2 ԲԱՄԲԱԿԻ ՀՈՒՄՔԻ ՓՈԽԱԴՐՈՒՄՆ ԱՌԱՆՑ ՏԱՐԱՅԻ

3. Բամբակի գործարաններն ու գնման կայանները պարտավոր են ձեռք առնել բոլոր միջոցները՝ 1935 թ. առավելագույն չափով ավելացնելու հումքի առանց տարայի փոխադրումն ինչպես կոլտնտեսություններից գնման կայանները, նույնպես և գնման կայաններից գործարանները.

ա) Յերևանի բամբակազտիչ գործարանը պարտավոր է Վաղզատի գնման կայանից հումքի տեղափոխումը գործարան կատարել առանց տարայի.

բ) Յերևանի և Հոկտեմբերյանի գործարաններն ու գնման կայանները պարտավոր են այն կոլտնտեսություններին, վորոնց իրենք կգտնեն հնարավոր, տալ կայուն առաջադրանքներ՝ հումքն առանց տարայի փոխադրելու համար այն հաշվով, վոր այդ կարգով տեղափոխված բամբակը կազմի իրենց գործարանի մբթերելիք ամբողջ բամբակի վոչ պակաս 10 %-ը, ցույց տալով կոնկրետ միջոցառումներ՝ այդ փոխադրումներն ապահովելու համար.

գ) պատրաստել հատուկ կողովներ և արկղներ՝ առանց տարայի յեկած ավտոմեքենաները և սայլերը դատարկելու և հումքը տեղափոխելու համար.

դ) բոլոր գնման կայանները պարտավոր են անմիջապես պայմանագրեր կնքել կոլտնտեսությունների հետ՝ իրենց ցույց ված քանակությամբ հումքն առանց տարայի տեղափոխելու համար, պայմանագրերի մեջ նշելով, վոր կոլտնտեսությունները պարտավոր են դրա համար սարքավորել իրենց տրանսպորտը, մասնավորապես սայլերի վրա չթաններ (յեղեգից), կողովներ պատրաստել այն հաշվով, վոր սայլերում կարողանան դարձյալ տեղավորել այնքան, վորքան վոր նրանց տարողությունն է.

ե) Վաղզատի գնման կայանից հումքն առանց տարայի գործարան տեղափոխել ավտոմեքենաներով։ Ավտոների համար ֆաներկոներից պատրաստել վահաններ (շչիտներ), վորոնք մեքենայի հիմնական կողերից բարձրանան 110—120 սանտիմետր այն հաշվով, վոր պլատֆորմի ընդհանուր բարձրությունը կազմի 1,5—1,6 մետր։

Տեղափոխելու ժամանակ հումքը կեղտոտվելուց,

թրջվելուց և կորուստներից պաշտպանելու համար ամեն մի մեքենայի վրա պետք է կարված լինի հատուկ բրեզենտ՝ հումքը ծածկելու համար, այն հաշվով, որ բրեզենտը կախված լինի մեքենայի բոլոր կողմերից, վերին կողերից ոչ պակաս 10—15 սանտ։ Բրեզենտի ծայրերին պետք է պատրաստված լինեն հատուկ ողեր (անցքեր), որոնցով նա դրսի կողմից ամրացվում է վահաններին.

գ) առանց տարայի փոխադրումների համար լայն կերպով օգտագործել կողովներ՝ պատրաստված տեղական նյութերից (ճյուղերից) և այլն։

3. ՏԱՐԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ

4. Բամբակազտիչ գործարաններն ու գնման կայանները պարտավոր են բամբակ հանձնողներին տարայի ճիշտ և կանոնավոր ժամանակարարում կազմակերպել, թույլ չտալով մեկ կոլտնտեսության գերամատակարարումը մեկ ուրիշի թերմատակարարման հաշվին, որի համար.

ա) առանձին կոլտնտեսությունների մատակարարումը կատարել՝ կախված բամբակի հասունանալու դրությունից և բերքահավաքն սկսելուց.

բ) բամբակ հանձնողներին բարդաններ մատակարարելու միջին նորման սահմանել այն հաշվով, որ յուրաքանչյուր նոր բարդան ութ անգամ շրջանառություն կատարի.

գ) աշխատել, որ բամբակ հանձնողները բարդանների արագ շրջանառություն կատարեն, նաև խնամքով վերաբերվեն դեպի բարդանները, սահմանելով տուգանք՝ բարդանը չվերադանձնելու կամ փչացնելու դեպքում, նրա արժեքի տասնապատիկ չափով.

դ) աշխատել, որ բարդանները լավ լցվեն այն հաշվով, որ յուրաքանչյուր մետրանոց բարդանում տեղավորվի ոչ պակաս քան 85 կիլոգր. հումք։

ե) Բարդանները տալ կանոնավոր վիճակում, արգելելով հումք փոխադրելու համար պատռված կամ անպետք բարդանի բացթողումը։

4. ԲԱՄԲԱԿԻ ՀՈՒՄՔԸ ԳՆՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻՑ ԳՈՐԾԱՐԱՆ ՓՈԽԱԴՐԵԼԸ

5. Գործարաններն ու գնման կայանները հումքը գնման կայաններից գործարան տեղափոխելիս պարտավոր են յելնել հետևյալից.

ա) գնման կայաններից հումքի փոխադրումը բամբակազտիչ գործարաններն ու յերկաթուղու կայարանները կատարվում է գործարանի կողմից սահմանված և գնման կայանին տրված պլանով։ Գնման կայաններից հումքի փոխադրման պլանում ճիշտ կերպով պետք է ցույց տրված լինեն հումքի փոխադրման ժամկետը, քանակը, բուսաբանական ու արդյունաբերական տեսակները և թելիկի յերկարությունը.

բ) յերկաթուղու կայարանն ուղարկվող հումքը կայարանում դասավորում է նախորդը հատկացված տեղում առանձին, ըստ վագոնների (մարկաների), ոչ մի դեպքում թույլ չտալով հումքի վագոնների խառնվելը։

գ) բամբակի հումքը յերկաթուղով ուղարկելիս, ինչպես բաց, նույնպես և փակ վագոններում, պետք է կախված և կպցված լինեն վագոններին պիտակներ (ետիկետներ), սերտիֆիկատներ, որտեղ ցույց տրված լինի ուղարկվող բամբակի գնման կայանը—ստացողը, պարտիաների համարները, հումքի բուսաբանական և արդյունաբերական տեսակները, ինչպես նաև թելիկի յերկարությունը։

5. ԳՆՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻՑ ԲԵՐՎԱԾ ԲԱՄԲԱԿԻ ՀՈՒՄՔԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԲԱՄԲԱԿ-ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐՈՒՄ

6. *Սահմանել, վոր.*

ա) գնման կայաններից ինչպես յերկաթուղով, նույնպես և բեռնակիրներով գործարան յեկող հումքն ընդունվում է բացառապես վերակշռելով, տեսակավորվում է, պահեստներում տեղավորվում ըստ արդյունաբերական և բուսաբանական տեսակների ու թելիկի յերկարության.

բ) գործարանի ընդունող տեսակավորողը գնման կայաններից յեկող բամբակի հումքը դարսում է պարտիաներ կազմելով ըստ բուսաբանական և արդյունաբերական տեսակների, յերկարության՝ ցույց տրված գնման կայանների բեռնագրերի մեջ, միաժամանակ մանրաղներն ստուգելով գնման կայանների տեսակավորման ճշտությունը։

Այն դեպքում, յերբ կասկած է առաջանում, վոր ստացված հումքը չի համապատասխանում բեռնագրի մեջ ցույց տրված վորակին ու յերկարությանը, ընդունողը դադարեցնում է ընդունումը, կասկածելի հումքից նմուշներ է վերցնում և հանձնում է լաբորատորիային՝ համապատասխան անալիզ կատարելու համար.

գ) միատեսակ վորակ և յերկարություն ունեցող հումքի այն քանակությունը, վորը տեղավորված է մի վորևե պահեստարանում (շտեմարան, ծածկ, հրապարակ, բունտ և այլն), վորը յենթակա չէ հետագա լրացման, շնորհիվ պահեստարանի միանգամայն լցված լինելուն կամ նման վորակի հումքի բացակայության, կոչվում է պարտիա և նման ամեն մի պարտիային տրվում է առանձին համար, վորի տակ և այդ պարտիան հաշվվում է շտեմարանային (ամբարային) գրքով և այդ համարի տակ գնում դավելու։ Հումքի յուրաքանչյուր լրացած պարտիայի համար ընդունող տեսակավորողը պարտավոր է տալ բնութագիր (անցագիր), վորը տվյալ պարտիայի հումքը բնութագրում է հետևյալ ցուցանիշներով. հումքի արդյունաբերական և բուսաբանական տեսակները, տեսակային մաքրությունը, սերմացու յե, թե վոչ, գործարանում ընդունողի աղգանունը, բունտ տալու սկիզբն ու վերջը, բունտի քաշը, մինչև գործարան յեղած տարածությունը մետրերով, թելիկի յերկարությունը, հումքի խոնավությունը, բամբակի (զտած) տեսակն ու դասը (կլաս), պաշտպանելու միջոցների քանակը՝ ապրանքակալները (պոդտավարնիկներ—տախտակներ, բրեզենտներ և այլն)։

6. ՀՈՒՄՔԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԳՆՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐՈՒՄ ՅԵՎ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐՈՒՄ

7. *Բամբակ. գործարաններն ու գնման կայանները պարտավոր են կազմակերպել.*

ա) պաշտպանության բոլոր առկա միջոցների լրիվ կանոնավորումը (ծածկած շենքեր, ժամանակավոր հրապարակներ, բրեզենտներ, ապրանքակալներ, տախտակներ) և նրանց նպատակահարմար ոգտագործումը։

բ) լրացուցիչ աղբյուրների փնտրումը՝ սեզոնի ժամանակ պաշտպանության մշտական և ժամանակավոր միջոցների ոգտագործման միջոցով, ինչպես նաև բրեզենտի փոխարեն բունտերը ծածկելու նոր միջոցներ.

գ) բամբակի հումքը ժամանակին բունտ դնելն ինչպես գործարանի տերիտորիայում, նույնպես և գնման կայաններում.

դ) յուրաքանչյուր գնման կայանի համար սահմանել հումքը պաշտպանելու և փոխադրելու պլան՝ ընդունելով վորպես կանոն, վոր գործարաններում և գնման կայաններում, վորոնք ապահովված չեն պահեստներով, սեպտեմբեր—հոկտեմբեր ամիսներին, մինչև անձրևներն սկսվելը, ծածկած շենքերը հումք չի լցվում, իսկ ամբողջ պաշտպանության յենթակա առաջին տեսակների հումքն այդ ամիսներին - դարավում և բաց տեղում։ Ծածկած շենքերն ոգտագործվում են ավելի բարձր խոնավություն ունեցող հումք պահպանելու, ինչպես և անձրևային օրերը բամբակ ընդունելու համար։

7. ԿՈՆՏՐԱԿՏԱՑԻՈՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ

8. Պարտավորեցնել գնման կայանների վարիչներին, ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհի Մթերկոմի շրջլիազորների հետ միասին, սկսած հոկտեմբերի մեկից, կազմակերպել կոլտնտեսություններին և մենատնտեսներին կողմից բամբակ հանձնելու կոնտրակտացիոն պայմանագրերի կատարման ստուգումը, վորի համար յուրաքանչյուր տասնորյակում կազմել չհանձնողների ցուցակ և ուղարկել համապատասխան ՄՏ կայաններին ու գյուղխորհուրդներին՝ վոչ բարեխիղճ պայմանագրերի վերաբերմամբ աղդելու միջոցներ ձեռք առնելու համար։ Կոլտնտեսությունների և մենատնտեսների հետ կնքված կոնտրակտացիոն պայմանագրերի կատարումն ստուգելու գործը կազմակերպելու պատասխանատվությունը դրվում է Մթերկոմի շրջլիազորների, գործարանների դիրեկտորների և գնման կայանների վարիչների վրա։

9. Գործարանների դիրեկտորների և գնման կայանների վարիչների վրա է դրվում ընդունված բամբակի հումք հանձնողների հետ անընդմեջ հաշվառք կատարելու, փոխադրման գործը ժամանակին կազմակերպելու, բամբակ հանձնողներին ձեթ, քուսպ և լինտեր բամբակ բաց թողնելու պատասխանատվությունը։

10. Սույն հրահանգը կազմված է ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհին կից Մթերկոմի և Թեթև արդյունաբերության ժողկոմատի սույն թվի հուլիսի 27-ի № 2941/232 վորոշման հիման վրա։

ՀՐԱՀԱՆԳ

ԲԱՄԲԱԿԻ ՍԵՐՄԱՑՈՒ ՀՈՒՄՔ ՅԵՎ ՍԵՐՄ ՄԹԵՐԵԼՈՒ, ՊԱՐՏԻԱՆԵՐ ԿԱԶՄԵԼՈՒ, ԶՏԵԼՈՒ, ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՅԵՎ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Բամբակի սերմանյութի տեսակային և ցանքային վորակը, վոր հսկայական ազդեցություն է գործում բերքատվության և արտադրանքի վորակի վրա, հանդիսանում է արտադրանքի ավելացման և նրա վորակի լավացման կարևորագույն գործոններից մեկը։

Բամբակի սերմանյութի քանակի և վորակի պահպանության հիմնական միջոցառումները հանդիսանում են՝ սերմանյութի ճիշտ հավաքումը, տեսակավորումը, պահպանումը, տեղափոխումն ու զտումը

Սերմանյութի (հումքի և հնդի) հավաքման, պահպանման ու փոխադրման կանոնների անցյալ տարիները նկատված խախտումները տեղիք տվին խոշոր կորուստների ինչպես սերմանյութի քանակի, նույնպես և նրա վորակի վատացման տեսակետից։

Մթերված սերմանյութերի քանակի և վորակի լրիվ պահպանության նպատակով, ամեն մի կոլտնտեսական, ՄՏկայանի, գնման կայանի, բամբակազտիչ գործարանի, Հողժողկոմատի բամբակ վարչության և բամբակտրեստի ամեն մի աշխատող պարտավոր է

լավ իմանալ սերմանյութի ստորև թված կանոնները՝ հավաքի, պարտիաներ կազմելու, մթերելու և պահպակելու վերաբերյալ ու վոչ մի դեպքում չխախտել այդ նանոնները։

Ընթացիկ տարում բաձրորակ սերմացու ստանալու համար նշանակալից չափով պետք է ուժեղացնել պայքարը։

I. ՍԵՐՄՖՈՆԴԻ ՄԹԵՐՄԱՆ ՅԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

1. Հայաստանի Հողժողկոմատի բամբակվարչությունը և Հայբամբակտրեստը մինչև սեպտեմբերի 5-ը սահմանում են, թե վոր գնման կայաններում պետք է ընդունվի սերմացու հումքը և վոր գործարանում պետք է զտվի։

Բամբակվարչությունը և բամբակտրեստը սահմանելով՝ թե վոր գնման կայաններն ու գործարաններն են ընդունելու և զտելու սերմացու հումքը, միաժամանակ կազմում են սերմացու հումքի մթերման ու պահպանման նախնական պլանը. վորոշվում է պահեստային շենքերի պահանջը՝ սերմացու հումքը դասելու և պահպանելու համար։

Ծանոթություն.—Սերմանյութի մթերման և պահպանման վերջնական պլանը կազմվում է ապրոբացիան վերջանալուց հետո և հշտվում է պահեստային շենքերի պահանջը։

21. Բամբակտրեստը սերմացու հումքի մթերման հատար կազմված նախնական պլանն ուղարկում է բամբակ. գործարաններին, իսկ վերջիններս՝ գնման կայաններին։ Այդ պլանի հիման վրա բամբակ. գործարաններն ու գնման կայանները պատրաստվում են սերմանյութի ընդունմանը, պահպանմանը և փոխադրմանը։

3. Սեպտեմբերի 1-ից վոչ ուշ, գործարանի ներկայացուցիչները՝ ՄՏ կայանների ներկայացուցիչների հետ միասին՝ ստուգում են գնման կայանների պատրաստ լինելը նոր բերքի սերմացու հումքն ընդունելու և պահպանելու համար։ Ստուգման ժամանակ պարզում են.

ա) գնման կայանները պահեստային շենքերով և տարայով ապահովված լինելը. պահեստային շենքերով լրիվ կերպով ապահովված չլինելու դեպքում՝ հրապարակների, ապրանքակալների (подтвоарник) և բրեզենտների առկայությունը՝ ցույց տալով վորքան հումքի համար.

բ) գնման կայանների պատրաստ լինելը՝ նոր բերքի հումքն ընդունելու համար (շենքերի մաքրությունը, վերանորոգված լինելը).

գ) բաժանմունքների պատրաստ լինելը, միաժամանակ առանձին-առանձին պահելու տարբեր խմբերի (группа) և կարգերի (котегория) հումքն ըստ ապրոբացիայի և տարբեր կարգերի՝ ըստ տեսակայնության [համաձայն ապրոբացիայի հրահանգի և բամբակի սերմացվի № 5258 ՈՍՏ-ի (համամիութենական ստանդարտ)].

դ) անցյալ տարիների բերքից բրոնիայի յենթարկված սերմացու հնդի առկայությունը՝. ցույց տալով նրանց վորակն ու պահելու նպատակը.

ե) գնման կայանների աշխատակիցների պատրաստականությունը՝ սերմացու հումքը ճիշտ ընդունելու և պարտիաներ կազմելու համար (ապրոբացիայի հրահանգը և № 5258 ՈՍՏ-ն իմանալը, թելիկի յերկարությունը, բամբակի արդյունաբերական տեսակները վորոշելը, ընդունելիք բուսաբանական տեսակի հիմնական հատկություններին ծանոթ լինելը)։

Ստուգումը վերջացնելուց հետո կազմվում է արձանագրություն չորս որինակից՝ ցույց տալով նկատված բացերը և նրանց վերացման համար արված առաջարկությունները։ Արձանագրությունը տրվում է գնման կայանին, բամբակ. գործարանին, Հողժողկոմատի սերմատուգող կետերին և բամբակտրեստին.

4. գնման կայանների ստուգման հետ միաժամանակ բամբակտրեստի և Հողժողկոմատի ներկայացուցիչներն ստուգում են բամբակ. գործարանների պատրաստ լինելը՝ սերմանյութերի մթերման, պահպանման ու զտման նկատմամբ և Հողժողկոմատի սերմ ստուգող կետերի պատրաստականությունը՝ սերմերի անալիզ անելու համար։

Ստուգման ընթացքում պարզում են.

ա) բամբակ. գործարանների՝ սերմանյութերի պահպանության պահեստային շենքերով և տարաներով ապահովված լինելը. պահեստային շենքերով լրիվին ապահովված չլինելու դեպքում՝ հրապարակների պատրաստությունն ու վերջիններս ապրանքակալներով և բրեզենտներով ապահովված լինելը.

բ) սերմանյութերի (հումքի և սերմի) մի քանի պարտիաներ միաժամանակ առանձին-առանձին պահելու բաժանմունքների (отсеки) պատրաստ լինելը.

գ) բամբակ. գործարանները մեխանիկական սերժապատիչներով ապահովված լինելը.

դ) Հողժողկոմատի սերմատուգող կետերի սերմացվի անալիզի համար աշխատանքային շենքերով և ապարատուրայով ապահովված լինելը.

5. բամբակ. գործարանների և Հողժողկոմատի սերմատուգող կետերի աշխատակիցների կոմպետենտ-

ՊԵՏԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUP-ում CCP
Ա. Մ. Ա. Մեսինկան

բակի սերմաբուծական աշխատանքների հիմնական կանոնները իմանալը (հասկացողություն՝ տեսակայնության մասին, նրա նշանակությունը, առանձին-առանձին պահելու և մաքրելու նշանակությունը, դաշտային ապրոբացիայի հրահանգի և № 5258 ՈՍՏ-ի և այլն)։

Ստուգումը վերջացնելուց հետո չորս որինակից արձանագրություն է կազմվում, վորտեղ ցույց են տրվում նկատված թերությունները ու նրանց վերացման համար արված առաջարկությունները։ Արձանագրությունը տրվում է բամբակ. գործարանին, Հողժողկոմատի սերմստուգող կետին, Հողժողկոմատի բամբակվարչության և բամբակտրեստին։

6. Մինչ սերմանյութի մթերումը, բայց վոչ ուշ սեպտեմբերի 15-ից, բամբակ. գործարանը, վորին կցված է տվյալ գնման կայանը, տալիս և վերջինիս կատարելու համար սերմացվի հումքի, բերքահավաքի, պարտիաներ կազմելու, պահպանության և փոխադրման պլանը, վոր կազմված պիտի լինի բամբակ. գործարանի դիրեկտորի կողմից ՄՏ կայանի դիրեկտորի հետ միասին՝ դաշտային ապրոբացիայի տվյալների հիման վրա։

2. ԾՐԱՆՆԵՐՈՒՄ ԲԱՄԲԱԿԻ ՍԵՐՄԱՑՈՒ ՀՈՒՄՔ ՀԱՎԱՔԵԼՈՒ ՅԵՎ ԳՆՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. Ապրոբացիան վերջանալուց ամիջապես հետո, ՄՏ կայանների և բամբակ. գործարանների դիրեկտորները ապրոբատորների հետ միասին կազմում են «ապրոբացիոն արձանագրության քաղվածքներ», վորոնց մեջ ցույց են տրվում հողամասը, դաշտերը և կոլտնտեսություններում մթերման յենթակա սերմացու հումքի վորակը։

Այդ քաղվածքները յենթաշրջանային գյուղատնտեսների և կոլտնտեսության վարչությունների միջոցով տրվում են բրիգադավարներին, վորոնք պատասխանատու յեն սերմանյութն առանձին հավաքելու և գնման կայաններին առանձին հանձնելու համար։

2. Կոլտնտեսությունները պարտավոր են՝ ապրոբացիոն արձանագրությունների քաղվածքների և ապրոբատորների ցուցմունքների համաձայն՝ սերմացու հումքն առանձին հավաքել և առանձին հանձնել գնման կայաններին (համաձայն ապրոբացիայի հրահանգի և № 5258 ՈՍՏ-ի), վոչ մի դեպքում թույլ չտալով միևնույն կոլտնտեսականներին միաժամանակ հավաքել սերմացու հումքն այն դաշտերից, վորոնք պատկանում են տարբեր խմբերի, կարգերի, տեսակայնության, բերքատվության, և տարբեր յերկարության թելիկներ ունեն։

3. Այն դեպքում, յերբ կոլտնտեսականը հավաքի ժամանակ մի խմբի կամ կարգի դաշտից մյուսը՝ կամ ըստ թելիկի յերկարության տարբերվող մի դաշտից հավաքելու համար մյուս դաշտն է տեղափոխվում, ողակավարը կամ բրիգադավարը պարտավոր է հսկել, վոր գոգնոցներն ու բարդանները խիստ մաքուր լինեն նախորդ դաշտի հումքից։

4. Առանձին ողակների կողմից հավաքած սերմացու հումքը կոլտնտեսության կողմից կշռվում է ըստ յուրաքանչյուր ողակի առանձին։ Կոլտնտեսու-

թյունն առանձին ողակների կողմից հավաքած, համաձայն ապրոբատորների ցուցմունքների և ապրոբացիոն արձանագրությունների քաղվածքների, միատեսակ ցուցանիշներով հումքը միացնում և կազմում է մի պարտիա ու հանձնում գնման կայանին՝ ուրիշ վորակ ունեցող հումքից առանձին։

5. Կոլտնտեսություններում բարդանները հումք լցնելուց հետո բարդանի մեջ հետևյալ բովանդակությամբ անցագիր են դնում.

ա) Կոլտնտեսության անունը, բրիգադը, բ) բուսաբանական տեսակը, գ) տեսակայնությունը, դ) դաշտերի կարգն ու խմբերն ըստ ապրոբացիայի տվյալների, ե) թելիկի յերկարությունն ըստ դաշտային ապրոբացիայի տվյալների և զ) վերարտադրությունը (ռեպրոդուկացիան)։

6. Բացի բարդանի մեջ դրված անցագրից, բարդանի վրա դրսից կպցնում են սերմանյութերի համար սպիտակ թղթից կարմիր տառերով գրված պիտակ՝ «Սերմացու» մակագրությամբ, պահեստի (резервный) հումքի համար (2-րդ խմբի դաշտերի)՝ կապտագույն պիտակ՝ «Պահեստի» մակագրությամբ և դեղին գույնի պիտակ՝ «Վարակված ֆոնդ» մակագրությամբ, այն հումքի վրա, վոր, չնայած վարակված է յեղել հիվանդություններով ու վնասվել է վնասատուներից, բայց ծայրահեղ կարիքի դեպքում կարելի կլինի ոգտագործել վորպես սերմացու։

7. Բամբակ հանձնողները գնման կայաններին հումքը հանձնում են միայն ստանդարտով նախատեսված խոնավությամբ։

8. Գնման կայաններին հումք ուղարկելիս (մանավանդ տարբեր խմբերի և կարգերի դաշտերի հումքը), բամբակ հանձնողներն այն ուղարկում են փաստաթղթով (բեռնագիր), վորի մեջ ցույց են տրվում այն տեղեկությունները, ինչ վոր բարդանների մեջ դրված անցագրերի մեջ (սույն գլխի 5-րդ կետ) են գրված։

III ԳՆՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐՈՒՄ ՍԵՐՄԱՑՈՒ ՀՈՒՄՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ՊԱՐՏԻԱՆԵՐ ԿԱԶՄԵԼՈՒ, ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՅԵՎ ԲԱՄԲԱԿ. ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԸ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. Սերմացու հումքը գնման կայաններում ընդունելու համար գործարանները նշանակում են ավելի փորձված ընդունողներ, վորոնք պետք է իմանան.

ա) գնման կայանում ընդունվող բուսաբանական տեսակի հիմնական հատկություններն ու վորակը.

բ) հումքի արդյունաբերական տեսակավորումը.

գ) տեսակայնության մասին, և նրա նշանակությունը գյուղատնտեսության ու արդյունաբերության համար.

դ) դաշտային ապրոբացիայի հրահանգը.

ե) բամբակի սերմացվի ստանդարտը (№ 5258 ՈՍՏ-ը).

զ) սերմանյութի լավացման միջոցառումները.

է) սերմանյութի մթերման, պարտիաներ կազմելու, պահպանելու կանոնները և դրանց նշանակությունն արտադրանքի պահպանման ու լավացման համար.

ը) կարողանան հումքն ընդունելիս վորոշել թելիկի յերկարությունը։

2. Այն գնման կայանները, որտեղ սերմանյութեր են մթերվելու, մինչև հումքն ընդունելը պետք է ունենան ապրոբացիայի արձանագրությունները և բամբակ. գործարանի դիրեկտորի կողմից, ՄՏ կայանի դիրեկտորի հետ միասին, դաշտային ապրոբացիայի տվյալների հիման վրա կազմած՝ սերմացու հումքի մթերման պլանը, որի համաձայն, գնման կայանները պարտավոր են հումքն ընդունել կոլտնտեսություններից։

3. Գնման կայանը կոլտնտեսությունից ընդունած սերմացու հումքն ստուգում է ըստ բուսաբանական տեսակների և թելիկի յերկարության։ Անցագրի ցուցանիշները և գնման կայանի բեռնագրերը համեմատվում են ապրոբացիայի արձանագրության տվյալների ու սերմացվի հումքի պլանի հետ, և այդ բոլոր տվյալներն ստուգելուց, արդյունաբերական տեսակներն ու թելիկի յերկարությունը վորոշելուց հետո միայն գնման կայանը պարտիաների խոշորացում է կատարում՝ հաշվի առնելով № 5258 ՈՍՏ-ը և դաշտային ապրոբացիայի արդյունքները։

4. Այն դեպքում, յերբ հումքը հանձնելու բեռնագիրը չկա, կամ կորցրել են, գնման կայանը պարտավոր է նման հումքը դարսել առանձնացված ջենքում կամ բակի մի առանձին մասում, մինչև պարզվի նրա ծագումն ու վորակը և Հողժողկոմատի վերահսկչի կողմից վորոշվի սերմացվի համար այդ հումքի պիտանի լինելը։

Պարզելով անցագրերի ու բեռնագրերի ցուցանիշների—ապրոբացիայի արձանագրության ցուցանիշների ու հանձնման պլանի հետ չհամապատասխանելու պատճառները՝ յերևան են հանում սխալ անցագիր կազմողներին և դատական պատասխանատվության յենթարկում։

5. Կոլտնտեսություններից սերմացու հումքն ընդունվում է միմիայն ստանդարտով թույլատրված խոնավությամբ։ Ստանդարտից բարձր խոնավություն ունեցող հումքը վերադարձվում է հանձնողներին՝ չորացնելու համար։

6. Գնման կայանները կոլտնտեսություններից ընդունած սերմացու հումքը դասավորում են ըստ առանձին բուսաների՝ հիմք ունենալով հետևյալ ցուցանիշները.

ա) բուսաբանական տեսակը, բ) տեսակայնությունը (թույլատրվում է միացնել այն պարտիաները, վորոնք տեսակայնությամբ նախատեսված են միևնույն կարգի սահմաններում, ըստ № 5258 ՈՍՏ-ի), գ) թելիկի յերկարությունը, դ) վերարտադրությունը, ե) դաշտերի խմբերը և կարգերը։

7. Ելիտային դաշտերի 1-ին և 2 րդ վերարտադրության և վերարտադրությունից անկախ 93 և դրանից բարձր տոկոսի տեսակայնություն ունեցող սերմացու հումքը պետք է միմիայն պահվի բարդաններում (ցանկալի յե՝ նոր բարդաններում)։ Գնման կայանն ընդունելիս անմիջապես դրոշմում է (маркирует) բոլոր բարդաններն այն ցուցանիշներով, վորոնց հիման վրա հումքից պարտիաներ է կազմում։

Ծանոթություն.—Հումքը բարդանների մեջ լցնելուց առաջ բոլոր բարդանները պետք է մաքրվեն հումքի կամ սերմացվի մնացորդներից՝ բարդանները շրջելու, թափտալու և կարերը մաքրելու միջոցով։

8. Մթերման կայանները յեթե ապահովված են տաքայով, ամբողջ սերմացու հումքը՝ անկախ նրա տեսակայնությունից, պահվում է տարաներում։ Վերջիններս պակաս լինելու դեպքում՝ 93%-ից ցածր տեսակայնություն ունեցող սերմացու հումքը թույլատրվում է պահել թափված դրությամբ, առանձին պարտիաներով, հատուկ պահեստարաններում (պահեստներ, ամբարներ) հավ լավ մեկուսացված բաժանմունքներում։

9. Ամբողջ սերմացու հումքը պետք է պահվի մեխանիկական գնման կայանի այն ծածկված շենքերում, որոնք լավ մաքրված են մինչ այդ պահված հումքի և սերմի պարտիաների մնացորդներից։

Կարականապես արգելվում է սերմացու հումքը բացոթյա բունտերում պահելը։

Ըստ ապրոբացիայի մի քանի տեսակայնության, կարգերի ու խմբերի առկայության դեպքում, յուրաքանչյուր պարտիայի համար հատկացվում են առանձին պահեստարան կամ առանձին բաժանմունքներ (отсеки), որոնք իրարից բաժանված պիտի լինեն համատարած միջնորմներով։

Յուրաքանչյուր նման պահեստարանին կամ բաժանմունքին ամրացվում է ցուցանակ (փայտե պիտակ), հետևյալ ցուցանիշներով. ա) բուսաբանական տեսակը, բ) տեսակայնությունը, գ) թելիկի յերկարությունը, դ) դաշտերի խմբերն ու կարգերը, ե) վերարտադրությունը, զ) պարտիայի ծագումը։

10. Գնման կայանում առանձին պարտիաներով ընդունված սերմացու հումքը պետք է պահպանել խառնվելուց և ինքնայրումից՝ ձեռք առնելով զգուշության բոլոր միջոցները։ Գնման կայաններում չի

թույլատրվում սերմացվի հումքի խոշոր կուտակում, այլ պարտիաները կազմելիս անմիջապես գործարան և փոխադրվում։

11. Հումքը պետք է գործարան տեղափոխել ամեն մի կազմած պարտիան առանձին։

Սերմացու հումքը գործարան և ուղարկվում միմիայն գրոշմված տարաներում, ըստ հետևյալ հատկանիշների. ա) բուսաբանական տեսակը, բ) տեսակայնությունը, գ) թելիկի յերկարությունը, դ) դաշտերի կարգը, ե) վերարտադրությունը, զ) պարտիայի ծագումը։

Կարականապես արգելվում է սերմացու հումքն առանց տարաների, ինչպես նաև չգրոշմված տարաներով փոխադրելը։

Ծանոթություն.—Բացառիկ դեպքերում, յերբ պարտիան ուղարկվում է յերկաթուղով և լրիվ չի բարձված, թույլատրվում է մի վագոնի բեռը լրացնել մի ուրիշ պարտիայի բարդաններով, սակայն այն պայմանով, որ նախորոք անպայման նախազգուշացվեն բամբակ. գործարանը և Հողժողկոմատի հսկիչ սերմատուգող կետը կատարված լրացուցիչ բարձման մասին, առանձին բեռնագրի քաղվածքով ցույց տալով բարդանների քանակը։ Այդ լրացուցիչ բարձված պարտիայի բարդանները պետք է առանձին դարսել։

12. Գնման կայանից ուղարկվող սերմացուի ամեն մի պարտիայի հետ բեռնագիր է ուղարկվում, որի մեջ ցույց է տրվում. ա) սերմացու լինելը, բ) գնման կայանը, գ) հումքի ծագումը, դ) հումքի բուսաբանական և արդյունաբերական տեսակները, ե) տե-

սակայնությունը, գ) թելիկի յերկարությունը, է) դաշտերի կարգերն ու խմբերը, ը) վերարտադրությունը և թ) քաշ՝ ու բարդանների քանակը։

13. Բամբակ հանձնողներից սերմացու հումքի ճիշտ ընդունման, ճիշտ պարտիաներ կազմելու, պահպանելու և բամբակ. գործարաններն ուղարկելու, ինչպես նաև ուղարկելիս փաստաթղթերի ձևակերպման պատասխանատվությունը գնման կայանի վարիչների վրա յե դրվում։

Գնման կայանի աշխատանքների, այն է՝ սերմացու հումք ընդունելու, տեսակավորելու, պարտիաներ կազմելու և պահպանելու վերահսկողությունը դրվում է գործարանի մթերման մասի վարիչի վրա։

ԲԱՄԲԱԿԱՔՏԻՉ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՅԵՎ ՔԻՆՀԱՈՒՔՈՒՄ ՍԵՐՄԱՑՈՒ ՀՈՒՄՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՅԵՎ ՔՏԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. Սերմացու հումք ընդունելու համար բամբակ. գործարաններն առանձնացնում են հատուկ և ավելի վորակյալ ընդունողներ։

2. Բամբակի հումքի ընդունումն սկսելուց առաջ, բամբակ. գործարանի՝ սերմացու հումքին հատկացված ամբողջ շենքերը (պահեստները, շտեմարանները, ծածկերը) և բակերը պետք է ուշադիր կերպով մաքրվեն անցյալ տարիների հումքի և սերմացվի բոլոր տեսակի մնացորդներից։

Սերմացու հումքը գտելու համար գործարանը նախապատրաստելու հսկողությունը դրվում է գործարանի մթերման մասի վարիչի վրա։

3. Գործարան մտնող սերմացու հումքի բոլոր բեռնագրերն ուշադիր կերպով ստուգվում են ապրորացիայի արձանագրությունների և սերմացու հումքի մթերման պլանների հետ։ Գործարան մտնող սերմացու հումքի յուրաքանչյուր պարտիայի թելիկի յերկարությունը վորոշվում է առանձին։

4. Այն դեպքում, յերբ դրոշմի և բեռնագրի ցուցանիշները չեն համապատասխանում, կամ դրոշմը չի կարդացվում, ընդունված սերմացու հումքն ընդունվող պարտիայից առանձին է դարսվում։ Հողժողկոմատի վերահսկիչը պարզում է այդ հումքի ծագումն ու վորակը, ինչպես նաև այդ հումքը սերմացվի համար պիտանի լինելը։

Պարզելով դրոշմի ցուցանիշները բեռնագրի ցուցանիշների հետ չհամապատասխանելու կամ չկարդացվելու պատճառները՝ Հողժողկոմատի վերահսկիչը յերեվան է հանում սահմանված կանոնները խախտողներին ու դատական պատասխանատվության յենթարկում։

5. Տարբեր գնման կայաններից ընդունված 3-րդ և նրանից ցածր վերարտադրության սերմացու հումքը կարելի յե մի պարտիա կազմել միայն Հողժողկոմատի վերահսկչի թույլտվությամբ։ Սակայն այդ դեպքում պարտադիր է, վոր հումքի բոլոր ցուցանիշները համապատասխանեն իրար, այն, է՝ բուսաբանական և արդյունաբերական տեսակները, տեսակայնությունը (ըստ № 5258 ՈՍՏ-ի կարգերի), թելիկների յերկարությունը, դաշտերի կարգերն ու խմբերն ըստ ապրորացիայի վերարտադրության։

Ծանոթություն.—Չի թույլատրվում տարբեր գնման կայաններից ընդունված ելիտային դաշտերի սերմացու հումքի 1-ին և 2-րդ վերարտադրությունները խառնել և մի պարտիա կազմել։

6. Ամբողջ սերմացու հումքը, անկախ նրա տեսակայնությունից, պահվում է միմիայն ծածկված և չոր շենքերում։ Կարականապես արգելվում է սերմացու հումքը բացօթյա բունտերում պահելը։

7. 93 և դրանից բարձր տոկոսի տեսակայնությամբ սերմացու հումքը պահվում է միմիայն բարդաններում, այն էլ այն բարդանների մեջ, որոնք լցրել են դաշտերում, բերել ու պահել են գնման կայաններում, որտեղից և բերվել են գործարան։ Շենքի մեջ բարդանները դասավորվում են այն ձևով, որ արանքներից լայնությամբ ու յերկարությամբ անցքեր մնան. այդ անցքերի մոտ ցուցանակներ են դրվում՝ պարտիաների ճիշտ կազմված լինելն ստուգելու համար։

Այն սերմացու հումքը, որ 93%-ից ցածր տեսակայնություն ունի, տարաներ չլինելու դեպքում թույլատրվում է պահել առանց տարաների (թափված), սակայն դրանց մեջ անպատճառ պետք է հորեր փորել՝ յուրաքանչյուր 20—25 քառ. մետրի վրա մի հոր բանալով։

Ծանոթություն.— Այն դեպքում, յեթե տարաները չլինելու պատճառով 93%-ից ցածր տեսակայնություն ունեցող սերմացուն պահվում է թափված դրությամբ, այդ մասին Հողժողկոմատի վերահսկչի մասնակցությամբ արձանագրություն է կազմվում։

Հողժողկոմատի վերահսկչի վրա խիստ պարտա-

կանություն է դրվում՝ ավելի ուժեղ հսկողություն ունենալ թափված ձևով պահվող սերմացու հումքի վրա։

8. Սերմացու հումքի յուրաքանչյուր պարտիան զտման և տրվում միմիայն Հողժողկոմատի վերահսկչի գիտությամբ ու յուրաքանչյուր դեպքում ձևակերպվում է հատուկ արձանագրությամբ (տես հավելված № 1)։

9. Սերմացվի պարտիան զտել սկսելուց հետո առաջին 30 րոպեյում ստացված ամբողջ հունդը հավաքվում է առանձին և հանձնվում որպես տեխնիկական հումք։

Մի պարտիան զտել վերջացնելուց հետո և մյուս պարտիան զտել սկսելուց առաջ, գործարանի շենքի բոլոր կորպուսներն ու այն ճանապարհները, որոնցով անցնելու յեն հումքն ու սերմացուն (հումքի կամերան, պնևմատիկան, կոնվեյերը և այլն), մանրակրկիտ կերպով մաքրվում են նախորդ պարտիաների հումքի ու սերմի մնացորդներից։

Ծանոթություն.—Այն դեպքում, յերբ պիտի մաքրվի մի պարտիա, որը նախորդ պարտիայից տարբերվում է միմիայն իր ցածր տեսակայնությամբ, թույլատրվում է չկատարել նախորդ կետում հիշված մաքրումները, ինչպես նաև առաջին 30 րոպեյում մաքրած սերմը չառանձնացնել որպես տեխնիկական հումք (Հողժողկոմատի վերահսկչի մասնակցությամբ կազմվում է արձանագրություն)։

10. Զտումից ստացված ամբողջ սերմացուն անմիջապես լինտերովկայի յե յենթարկվում։ Յեթե մի

լենտերովկան բավական չէ, յենթարկվում է յերկրորդ մանգամ։

Այն գործարաններում, վորտեղ սերմազտիչներ են դրված, սերմացուն կոնվեյերից անմիջապես պետք է անցնի և զտվի նրա վրա՝ նիհար ու չհասունացած սերմերից և մեռած աղբից (քարեր և այլն)։

Սերմացու հունդը զտիչի վրա մաքրելուց, իսկ վորտեղ այդպիսին չկա, լենտերովկայից դուրս գալուց հետո, կոնվեյերի տակից անմիջապես լցնում են պարկերը և դրոշմում հետևյալ ցուցանիշներով. ա) բուսաբանական տեսակը, բ) տեսակայնությունը, գ) թեթևի յերկարությունը, դ) արդյունաբերական տեսակը, ե) պարտիայի №-ը, զ) վերարտադրությունը, է) ծագումը։

11. Համաձայն Հողժողկոմատի հրահանգի, ստացվող սերմացվի բոլոր պարտիաներից նմուշներ են վերցվում և հանձնվում Հողժողկոմատի հսկիչ սերմկետին՝ անալիզի համար։

12. Սերմացու հումքից ստացված սերմի վորակը և սերմացվի համար պիտանի լինելը վորոշում է Հողժողկոմատի վերահսկիչը, վորը և կրում է սերմացվի վորակի ճիշտ վորոշման ամբողջ պատասխանատվությունը։

13. Ստացվող սերմացվի բոլոր պարտիաների համար Հողժողկոմատի ստուգող սերմկետերը, վերահսկչի ստորագրությամբ, հավատագրեր (սերտիֆիկատներ) են տալիս։

5. ՍԵՐՄԱՑՈՒ ՀՈՒՆԴԸ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՅԵՎ ԳՆՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐՈՒՄ ՊԱՀԵԼՈՒ ՅԵՎ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԲԱԺԱՆԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. Զտումից ստացված՝ ելևտային 1-ին և 2-րդ վերարտադրման և 93 ու դրանից բարձր տոկոսի տեսակայնությամբ յեղած ամբողջ սերմացուն ուղղակի կոնվեյերի տակից (կամ սերմազտիչով զտելուց հետո) լցնում են պարկերը, վորոնք դրոշմված են այն ցուցանիշներով, ինչ ցույց է տրված նախորդ գլխի 10-րդ կետում։

2. Սերմը, վոր պահվում է պարկերում և ծածկված շենքի մեջ, դասվում է շտաբելով, իսկ արանքներում թողնվում են անցքեր (ճանապարհներ), վոչ պակաս մի մետր լայնությամբ։

Ծանոթություն. — Սերմացուի համար պարկեր պակասելու դեպքում թույլատրվում է 93 %-ից ցածր տեսակայնություն ունեցող սերմացուն պահել թափված դրությամբ (առանց պարկերի)։ Թափված պահելու դեպքում սերմացուի մեջ հորեր են բացում՝ 10—20 քառ. մետրին 2 հորի հաշվով։

3. Ամբողջ սերմացու հունդը, անկախ նրա տեսակայնությունից, պահվում է միմյայն ծածկված և լավ ոդափոխություն ունեցող շենքերում (պահեստ, շտեմարան, յեռապատ ծածկեր)։ Կտրականապես արգելվում է սերմացուն բացոթյա բունտերով պահելը։

4. Այն բոլոր պահեստներում, ուր սերմացու յե

պահվում, ցուցանակներ են կախվում, վորտեղ ցույց է տրվում. ա) բուսաբանական տեսակը, բ) տեսակայնությունը, գ) թելիկի յերկարությունը, դ) արդյունաբերական տեսակը, ե) վերարտադրությունը զ) սերմի ծագումը, է) պարտիայի №-ը։

5. Սերմացու հունդը գործարանից գնման կայան և գնման կայանից կոլտնտեսություններ է փոխադրվում միմիայն Հողժողկոմատի և Բամբակտրեստի պլանի համաձայն։

6. Սերմացուի վոչ մի պարտիա, անկախ նրա մեծությունից, գործարանի սահմաններից դուրս չի կարող բաց թողնվել առանց Հողժողկոմատի սերմ ստուգող կետի հավաստագրի կրկնակի (դուբլիկատի), վորոնց յուրաքանչյուրի վրա պետք է լինի վերահսկչի ստորագրությունը (դուբլիկատները գործարանն է գրում)։

6. ԲԱՄԲԱԿ. ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ, ԳՆՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ՅԵՎ ԳՈՐԾԱՐԱՆԻՆ ԿԻՑ՝ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ՍԵՐՄՍՏՈՒԳՈՂ ԿԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Ամեն ամիս, ամսի 1-ին և 15-ին, Հողժողկոմատի վերահսկիչները բամբակ. գործարանի ներկայացուցիչների հետ միասին ստուգում են գործարաններին, գնման կայանների և Հողժողկոմատի սերմստուգիչ կետերի աշխատանքները՝ պարզելու համար այդ կազմակերպությունների կողմից սույն կանոնների կիրառումը՝ սերմանյութերի մթերման, պահպանման և գման վերաբերյալ։

2. Ստուգման արդյունքները, նկատված թերությունները վերացնելու համար արված առաջարկությունների հետ միասին, ձևակերպվում են արձանագրությամբ և տրվում՝ բամբակ. գործարանին (գնման կայանի աշխատանքների ստուգման ժամանակ տրվում է նաև կայանին), Հողժողկոմատի սերմստուգող կետին, Հողժողկոմատի բամբակվարչությանը և բամբակտրեստին։

3. Հողժողկոմատի վերահսկիչները և գործարանի ներկայացուցիչները պատասխանատու են արձանագրության մեջ մատնանշված առաջարկների կատարումն ստուգելու համար, այն է՝ սերմանյութի վորակի և քանակի պահպանության համար, ինչպես նաև ժամանակին տեղեկացնելու Հողժողկոմատին ու բամբակտրեստին՝ աշխատանքների մեջ նկատված թերությունների և նրանց վերացման վերաբերյալ։

4. Գնման կայանները, բամբակ. գործարանները և Հողժողկոմատի սերմստուգող կետերը պարտավոր են տեղեկություններ տալ Հողժողկոմատի վերահսկչին ու գործարանի ներկայացուցչին, ինչպես նաև Հողժողկոմատին, բամբակտրեստին՝ վերահսկիչների նկատած թերությունների վերացման մասին։

5. Արձանագրությունների և ստացված ինֆորմացիաների հիման վրա՝ Հողժողկոմատն ու բամբակտրեստը միջոցներ են ձեռք առնում վերացնելու սերմը պահպանելու, զտելու և անալիզի աշխատանքների մեջ յեղած թերությունները, վոր մինչ այդ չեն վերացրել տեղերում գնման կայանները, բամբակ. գործարանները և Հողժողկոմատի սերմստուգող կետերը։

Ամեն ամիս, ամսի 10-ին և 25-ին Հողժողկոմատը ինֆորմացիոն տեղեկագիր է կազմում և ուղարկում ԽՍՀՄ Հողժողկոմատի գլխ. բամբակվարչության, իսկ բամբակտրեստը նույն հարցերի վերաբերյալ ինֆորմացիա յե կազմում և ուղարկում գլխ. բամբակվթերարդին։

7. ՄՏ ԿԱՅԱՆՆԵՐՈՒՄ, ԲԱՄԲԱԿ. ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՅԵՎ ԳՆՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐՈՒՄ ՏԵՍԱԿԱՎՈՐ ՍԵՐՄԵՐԻ ԳՐՔԵՐԻ ՄԵՋ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Սերմանյութերի քանակի և վորակի ճիշտ հաշվառման նպատակով, անհրաժեշտ է սերմանյութը ընութագրող բոլոր տվյալները ժամանակին մտցնել տեսակավոր սերմերի գրքի մեջ, վոր այդ նպատակի համար պահվում է Մ. Տ. կայաններում, բամբակ. գործարաններում և գնման կայաններում։

2. Հողժողկոմատի վերահսկիչները պարտավոր են հսկել այդ գրքերի մեջ Մ. Տ. կայաններում, գործարաններում և գնման կայաններում ճիշտ գրանցումներ կատարելուն։

3. Սերմ. գրքերը պետք է պահվեն անկիզելի պահարաններում։

Սույն հրահանգը կազմված է ԽՍՀՄ Հողժողկոմատի և Թեթև արդյունաբերության կոմիսարիատի համապատասխան հրահանգի հիման վրա։

ՀԱՎԵԼՎԱԾ № 1

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(կազմվում և տրվում է բամբակ. գործարանին առ այն, վոր նա իրավունք ունի սերմացուի պարտիաները զտելու միմիայն այն դեպքում, յերբ գործարանը պատրաստ է սերմացուն մեկուսացված կերպով մաքրելու և պահպանելու։)

Ներկա արձանագրությունը կազմված է առ այն, վոր « » . . . . . 193 թվ. Հողժողկոմատի . . . . . սերմստուգող կետի վերահսկիչ . . . . . յանի ներկայությամբ մաքրելու համար թույլ է տրված սերմացու հումքի № . . . պարտիան . . . բուսաբանական տեսակի . . . . . ծագումը։

193 թվի բերքից, հումքի քաշը . . . . . տոննա մաքրելուց առաջ, սերմանյութի անցնելու ճանապարհները գործարանում ստուգված են և գտնվել են մաքուր դրությամբ՝ նախորդ մաքրված պարտիաների հումքի ու սերմի մնացորդներից, բացի հետևյալ շենքերից և տերիտորիայի մասերից . . . . . .
. . . . . .
Սերմացու հնդի պարտիան զտելուց հետո, անմիջապես ուղարկված է պահպանելու բամբակ. գործարանի . . . . . շենքում, վորը մաքրված է նախորդ զտված պարտիայի հումքի և

հնդի մնացորդներից և հատկացված և մաքրվող պարախայի սերմացու հունդը պահպանելու համար։

Լրացուցիչ առաջարկություններ՝

. . . . . .

. . . . . .

. . . . . .

. . . . . .

. . . . . .

Ստորագրություններ՝

№ . . . բամբակ. գործարանի

դիրեկտոր՝

Հողժողկոմատի վերահսկիչ՝

Խ. Ս. Հ. Մ.
Աշխատանքի ՅԵՎ պաշտ.
Խորհուրդ
Ստանդարտացման
Համամիութենական
Կոմիտե

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

Համամիութ. ստանդարտ	ՈՍՏ 5258
Բամբակի սերմի	.....

Այս ստանդարտը տարածվում է յեգիպտական և ամերիկյան տեսակի բամբակի սերմի վրա, որ իբրև սերմանյութ, նախապես սահմանված և ոգտագործելու Միջին Ասիայում, Անդրկովկասում և Կազակստանում։

ա) Դասակարգում (կլասիֆիկացիա)

ա) տիպերը (կախված բուսաբանական տեսքից և տեսակից)	բ) խմբերը և կարգերը (կախված տեսակային մաքրությունից)		գ) դասեր (կախված ցանքի վորակից՝ ծլունակությունից, ամման հներգիայից, կենդանի ու մեռած աղբի քանակից և խոնավությունից
	Խմբերը	Կարգերը	
Տիպ 1-ին. յեգիպտական տեսակը	ա) բարձր տեսակ . .	1-ին կարգ 2-րդ » 3-րդ »	1-ին դաս
Տիպ 2-րդ. ամերիկյան տեսակը	բ) միջին տեսակ . .	4-դը » 5-րդ » 6-րդ »	2-րդ դաս
	գ) ցածր տեսակ . .	7-րդ » 8-րդ » 9-րդ »	

բ) Տեխնիկական պայմանները

ա) խմբեր և կարգեր

Տվյալ տիպի յուրաքանչյուր սելեկցիոն տեսակի սերմը կարող է գտնվել հետևյալ խմբերից և կարգերից մեկում.

(Աղյուսակը տես 39 էջում)

Ծանոթություն.—Ամերիկյան բամբակի սերմի սահմ. պարունակությունը և գերազանց հիբրիդների 1-ին տիպի առանձին կարգերի համար սահմանում է ԽՍՀՄ-ի Հողժողկոմատը, սակայն 4%-ից վոչ ավելին։

Հաստատված է Աշխ. և Պաշտ. Խորհրդին կից ստանդարտացման Համամիութենական կոմիտեյի կողմից.
1933 թ. փետրվարի 8-ին

Բամբակի ցանքի սերմ	ՈՍՏ 5258

Ծանոթություն 2.—1-ին տիպի սերմանյութի այն պարտիաները, վորոնք պարունակում են ամերիկյան բամբակի գերազանց հիբրիդների սերմերի խառնուրդ, պետք է պահվեն մեկուսացված այն պարտիաներից, վորոնք չեն պարունակում ամերիկյան բամբակի սերմը.

Սերմերի տիպերը	Ամերիկյան բամբակի գերազանց հիբրիդներ		Ամերիկյան բամբակի գերազանց հիբրիդներ	
Ամերիկյան բամբակի գերազանց հիբրիդներ	Ցեղատեսակ	Ամերիկյան բամբակի գերազանց հիբրիդներ	Ցեղատեսակ	Ամերիկյան բամբակի գերազանց հիբրիդներ
Ամերիկյան բամբակի գերազանց հիբրիդներ	Ամերիկյան բամբակի գերազանց հիբրիդներ	Ամերիկյան բամբակի գերազանց հիբրիդներ	Ամերիկյան բամբակի գերազանց հիբրիդներ	Ամերիկյան բամբակի գերազանց հիբրիդներ
ա) Ամերիկյան բամբակի գերազանց հիբրիդներ	1	100,0-ից մինչև 99,5 %	100-ից մինչև 99 %	
	2	99,5 „ „ 99,0 „	99 „ „ 97 „	
	3	99,0 „ „ 98,0 „	97 „ „ 95 „	
բ) Ամերիկյան բամբակի գերազանց հիբրիդներ	4	98,0 „ „ 97,0 „	95 „ „ 93 „	
	5	97,0 „ „ 96,0 „	93 „ „ 90 „	
	6	96,0 „ „ 95,0 „	90 „ „ 85 „	
գ) Ամերիկյան բամբակի գերազանց հիբրիդներ	7	95,0 „ „ 90,0 „	85 „ „ 80 „	
	8	90,0 „ „ 85,0 „	80 „ „ 75 „	
	9	85,0 „ „ 80,0 „	75 „ „ 70 „	

գ) Դասեր

Դասերի համարները	Ցանքատարածության % տոկոսներով հաշվարկը	Ցանքատարածության % տոկոսներով հաշվարկը	Ոչ ցանքատարածություն	Մեռած ցանք	Ցանքատարածության % տոկոսներով հաշվարկը
1	90	80		1	12
2	85	75		1	12

դ) Խառնուրդ՝ բամբակի սերմանյութում

Խառնուրդների անունը	Խառնուրդների կազմը
Կենդանի աղբ	ա) Մնացյալ բոլոր այլ կուլտ. բույսերի սերմեր բ) Բոլոր մոլախոտերի սերմեր
Մեռած աղբ	ա) Հանքային խառնուրդ (հող. քար, ավազ և այլն) բ) Օրգանական խառնուրդ (ցողունի մասեր, սերմի կնգուղներ և այլն)

գ) Դոկումենտացիա

ա) Բամբակենու սերմանյութի յուրաքանչյուր պարտիային պետք է կցել վորակական փաստաթուղթ, վորի մեջ ցույց է տրվում.

1. շրջանը
2. սերմերի անունը
3. տիպը և խումբը
4. կարգը՝ տեսակայնության տոկոսի նշումով
5. դասի համարը՝ նշելով նրա բոլոր վորակական ցուցանիշները,

Ծանոթություն.—Սերմերը սնկային և բակտերիական հիվանդություններով վարակվելու և կենդանական ծագում ունեցող ՀԱՍԱՏՈՒՆԵՐԻ կողմից ՀԱՍՎԵԼՈՒ դեպքում փաստաթղթերում համապատասխան նշումներ է արվում՝ այդպիսիները լինելու մասին։

բ) Բամբակենու սերմանյութի վերաբերյալ վորակական փաստաթղթերը տրվում են պետական բամբակային տեսչության կողմից,

դ) Մեթոդիկա

Համամիութենական ստանդարտի կանոնները սահմանելուց առաջ սերմի ստուգումը, նրա մեթոդիկան, ինչպես նաև վորակական փաստաթղթերի ձևը սահմանում է ԽՍՀՄ-ի Հողժողկոմատը։

ՀՐԱՀԱՆԳ

ԲԱՄԲԱԿԻ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՊԱՅՔԱՐ՝ ԲԱՄԲԱԿ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ

1. Մթերման կայանի այն ամբողջ տարածությունը, որտեղ բամբակ է ընդունվում, պետք է սալահատակված լինի, միշտ պահվի մաքուր և չոր դրության մեջ, որպեսզի բամբակն ընդունելու ժամանակ չկեղտոտվի ու չթրջվի։

2. Կշռելու ժամանակ մեքենայից, սայլից կամ կշեռքի վրայից թափված բամբակը պետք է անմիջապես հավաքվի և կշռվի ընդունվող բամբակի հետ, յեթե նա չի կեղտոտվել ու թրջվել։

3. Բամբակի ընդունումը վերջանալուց հետո, գնման կայանի ամբողջ հողամասի վրա թափված բոլոր բամբակը խնամքով պետք է հավաքել, կեղտից մաքրել, բարդանների մեջ լցնել և առանձին պահել։ Այս ձևով հավաքված բամբակն առանձին է կշռվում և գնման կայանի գրքերում գրանցվում որպես «հավաքված» (подбор")։

4. Բարդանները սայլերից, ավտոմեքենաներից կամ վագոններից իջեցնելիս պետք է զգուշությամբ վարվել և թույլ չտալ, որ բարդանները վերևից գետին գցեն, քանի որ գետին գցելուց բարդանը պատռվում ու բամբակը թափվում է։

2. ՊԱՅՔԱՐ՝ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ԴԵՄ՝ ԲԱՄԲԱԿ ՊԱՀԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ

1. Գործարաններում և գնման կայաններում արգելվում է բամբակը պահել խոնավ, վատ ոդափոխություն ունեցող պահեստներում և առանց ապրանքակալների։

2. Բամբակը բացոթյա բունտերով, բրեզենտների տակ պահելու դեպքում, անձրևներից կամ ձյունից հետո անհրաժեշտ է բունտերը լավ մաքրել ջրից ու ձյունից։ Յերբ պարզվի՝ որ ջուրն անցել բրեզենտի տակը, թրջված բամբակն անմիջապես պետք է առանձնացնել և չորացնել։

3. Բամբակի փչացումը, կամ նրա որակի վատացումը կանխելու համար, անկախ նրանից, թե որտեղ է պահվում, անհրաժեշտ է պարբերաբար, վոչ ուշ քան յերկու օրը մեկ անգամ, սառուցել բունտերի դրությունը՝ նրանց մեջ հորեր փորելով և տաքությունը յերկաթյա ձողով չափելով։

4. Գնման կայանները բամբակը գործարաններն ուղարկելու կամ յերկարատև պահելու համար, յերբ ինքնայրումից ու փչացումից խուսափելու համար լցնում են բարդանները, բացառապես չոր վիճակում պետք է լցնեն։

5. Բամբակի բունտերն անպայման դրվում են ապրանքակալների վրա։ Բունտ դնելու ժամանակ բան-

վորներին արգելվում է բամբակի վրայով անցուդարձ կատարել։

6. Բամբակը հրդեհներից պաշտպանելու գործը միշտ պետք է լինի գործարանի դիրեկտորի և գնման կայանի վարիչի ուշադրության կենտրոնում, վորոնք և պարտավոր են ամեն որ անձամբ ստուգել հակահրդեհային միջոցների պատրաստ լինելը՝ հրդեհի դեմ պայքարելու համար։

Հակահրդեհային գործի լավ կազմակերպման ամբողջ պատասխանատվությունն անմիջականորեն դրվում է գործարանի դիրեկտորի և գնման կայանի վարիչի վրա։

3. ՊԱՅՔԱՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ԴԵՄ՝ ԲԱՄԲԱԿԸ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ

1. Հատուկ ուշադրություն պետք է դարձնել բամբակն առանց տարայի փոխադրելու գործին, վորի համար անհրաժեշտ է նախապատրաստվել՝ բամբակը տեղափոխելու և կշռելու համար համապատասխան հրապարակներ հարմարեցնելով, կողովներ ու արկղներ պատրաստելով։

Բամբակացանների կողմից բամբակը չթաններով (յեղեգից) հարմարեցրած սայլերով բերելու դեպքում, ճանապարհին բամբակը չթափելու համար, անհրաժեշտ է, չթանների ներսի կողմից մի շարք բարդաններ դնել, ապա բամբակը լցնել չթանի մեջ։

Բամբակը կողովներով կամ արկղներով փոխադրելիս պետք է աշխատել, վորքան կարելի յե, շատ պինդ լցնել։ Ավտոմեքենաներով, առանց տարայի,

փոխադրվող բամբակն անպայման պետք է բրեզենտներով ծածկել։

2. Բամբակը նոր կամ կարկատած բարդանների մեջ լցվում է անպայման չոր վիճակում, բարդանների բերանները լավ կարվում են և ուշադիր կերպով դարսվում սայլի վրա՝ բերաններն անպատճառ դեպի ներս, ամբողջ ճանապարհին հսկելով, վոր բամբակը չթափվի կամ ֆլասվի։

3. Բամբակը յերկաթուղու կայարան հանձնելիս, մինչև վագոններին բարձելը պետք է ապահովել ծածկելու բրեզենտներով և պաշտպանության այլ միջոցներով։

4. Անհրաժեշտ է բամբակը բարձելուց առաջ վագոնները լավ մաքրել։

5. Վագոնները բարձելուց հետո թափված բամբակն անպայման հավաքել առանձին պարկերի մեջ։

6. Բամբակ բարձելու և դատարկելու ժամանակ բանվորների կողմից կեռ յերկաթներ գործածելը կըտրականապես արգելվում է, վորովհետև դրանցով բարդանները պատառոտում—փչացնում են, ինչպես և տանելու ժամանակ բամբակը թափում։

7. Անհրաժեշտ է, վոր բամբակ. գործարանները, գնման կայաններն ու կոլտնտեսություններն այս հրահանգը՝ տեղական լեզուներով՝ փակցնեն աչքի ընկնող տեղերում։

Հողժողկոմ՝ Վ. ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

Հայբամբակտրեստի կառավարիչ՝

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Տպագրության համար պատասխան Ն. Մարտիրոսյան
Սրբագրիչ Գ. Հակոբյան
Գլավլիտ № 435, հրատ. № 268
Հանձնված է տպագրության 13 սեպտեմբերի 1935 թ.
Ստորագրված է տպագրելու 21 սեպտեմբերի 1935 թ.
Գրավոր № 552 տիրաժ 700

Գյուղբիտի տպարան, Երևան, Նալբանդյան № 11

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀԱՍՌ Հայ ССР
Ա. Մեսրոպի անվան
Ա. Մեսրոպի անվան գրադարան
Գրադարան
Գրադարան

15к

54. 900

ИНСТРУКЦИИ

О заготовке хлопкового сырья и семян

Селхозгиз, Эриван, 1935